ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/3

ք. Երևան «12» 03 2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Լ. Մնացականյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աուդիտի իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: մ

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

տուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ	<<Բի-Դի-Օ Արմենիա>>ՓԲԸ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	Ք.Երևան, Վ.Սարգսյան 10, տարածք 114
Կոնվերսբանկ ԲԲԸ	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930059757870100	Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 01569792
Տնօրեն՝ Լ.Մնացականյան	Տնօրեն՝ Վ.Սահակյան
---------- Կ.Տ	---------- Կ.Տ
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
« 12» մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79211160	**Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գործունեության արտաքին աուդիտի տեխնիկական բնութագիր** **Ծրագրի անվանում՝** «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» (այսուհետ՝ Ծրագիր) **Աուդիտի ենթակա հաշվետվություն՝** «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և նրա դուստր ընկերության՝ «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (երկուսը միասին այսուհետ՝ Հիմնադրամ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները **Աուդիտի ենթակա ժամանակահատված՝** 01.01.2017-31.12.2017թթ. **Տեխնիկական բնութագիր** **1. Ծրագրի նկարագիր, ծրագրային ուղղությունների բյուջեները** **1.1 Ծրագրի նկարագիր:** «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին, որը կոչված է իրականացնելու փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցությունը և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերը Հայաստանում՝ապահովելով կապը փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների և պետական կառույցների միջև: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ն իր գործունեությունն իրականացնում է Երևանում գտնվող կենտրոնական գրասենյակի և ՀՀ բոլոր մարզերում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով: 2009թ.-ին Հիմնադրամը հիմնադրել է (100% բաժնեմասով) «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական	դրամ	3000000	1	ՀՀ, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	Պայմանագրի կնքման օրվանից 35 օրացուցային օրվա ընթացքում

		ընկերությունը (այսուհետ նաև՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ կամ դուստր ընկերություն): Դուստր ընկերությունը հիմնականում զբաղվում է ՓՄՁ սուբյեկտների վարկավորմամբ: Հիմնադրամն ունի ասոցիացված կազմակերպություն՝ «Մարկետինգ Ընդ Մենեջմենթ 360» ՓԲԸ (33.33% բաժնեմաս): Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՓՄՁ սուբյեկտներին աջացկությունն իրականացնում է հետևյալ հիմնական ուղղություններով. **1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում՝** Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ: **2. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)՝** **2.1 Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՝** «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի նպատակն է մրցունակ ՓՄՁ-ների հիմնումը Հայաստանում: Ծրագիրը ներառում է ուսուցողական, մասնագիտական խորհրդատվության, տեղեկատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ: **2.2 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն՝** ծրագրի շրջանակներում դասընթացներ են կազմակերպվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՃՄՀԳ (JICA) համատեղ ծրագրի շրջանակներում, Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Նիդերլանդների ավագ փորձագետների «PUM» կազմակերպության միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (UNHCR) ֆինանսավորմամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ***3.* ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝** Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում տրամադրվում է իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով աջակցություններ: 4. **ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն՝** 4.1 ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում) 4.2 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում) 4.3 Գործարար նախաձեռնություններին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում) 4.4 ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում, որն իրականացնում է «ՓՄՁ ներդրումներ»					

		ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը 5. **Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն՝** ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում իրականացվել են ենթակառուցվածքային ծրագրերի շինարարական աշխատանքներ, մշակվել և հրատարակվել է «Սննդամթերքի մակնշման ուղեցույցը», ինչպես նաև «Սառնարանային տնտեսությունների կառուցման և շահագործման» և «Պատշաճ արտադրական պրակտիկայի և պատշաճ հիգիենայի պրակտիկայի կիրառման ձեռնարկ չորացված միրգ ու բանջարեղեն արտադրողների համար» օրինակելի մոդելները: **6. Կանանց ձեռներեցությանն աջակցություն՝** ծրագիրն իրականացվում է ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավույն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով: **7. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում՝** Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցությունը և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովումն իրականացվում է հիմնականում Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում, ինչպես նաև ՓՄՁ միջազգայնացմանն ուղղված այլ միջոցառումների շրջանակներում: **8. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում՝** ա) ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր բ) ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր գ) «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր դ) «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում–փուլ-2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր ե) «Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր զ) Նիդերլանդների ավագ փորձագետների (PUM) կազմակերպության հետ համատեղ ծրագիր **9. Աջակցության այլ ծրագրեր՝** ա) Գյուղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների ձեռքբերմանն աջակցության ծրագիր բ) «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցում» ծրագիր Հաշվետու ժամանակահատվածում «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրի					

շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 4700 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների ***տրամադրվել է 11,487 աջակցություն:***

Տրամադրված աջակցության ուղղություն	**2017թ. ընթացքում Տրամադրված աջակցության քանակ**
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	464
Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ	246
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	10,337
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	81
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում	348
Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	11
Ընդամենը	***11,487***
Այլ ծրագրեր	
Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներ	126

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 3.3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96.7%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

1.2 Ծրագրային ուղղությունների բյուջեները

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամնի գործունեության իրականացման ծրագրային ուղղությունների բյուջեն (առանձնացված ըստ համաֆինանսավորման ծրագրերի բյուջեն ներկայացվել է արտարժույթներով):

Ծրագրային ուղղություններ	01.01.2017-31.12.2017թ. ժամանակահատվածի փաստացի մուտքեր	01.01.2017-31.12.2017թ. ժամանակահատվածի փաստացի ծախսեր
«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» 2017 թվականի ծրագիր՝ այդ թվում ԵՄ "Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն-COSME (2014- 2020թթ.)" ծրագրի ՀՀ անդամակցության վճար	շուրջ 478,100,000.0 ՀՀ դրամ	շուրջ 473,800,000.0 ՀՀ դրամ
«Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագիր	շուրջ 614,380.0 ԱՄՆ դոլար	շուրջ 614,630.0 ԱՄՆ դոլար
Ձեռնարկությունների եվրոպական ցանց (ՁԵՑ)	շուրջ 135,340.0 Եվրո	շուրջ 45,540,000.0 ՀՀ դրամ
ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր	շուրջ 385,000.0 Եվրո	շուրջ 270,285.0 Եվրո
«Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր	շուրջ 48,735.0 Եվրո	շուրջ 13,090,000.0 ՀՀ դրամ
«Support young innovative companies scaling-up their activities in the Single Market» ծրագիր	շուրջ 8,645.0 Եվրո	շուրջ 359,850.00 ՀՀ դրամ
ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից իրականացվող «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ծրագիր	շուրջ 5,465.0 Եվրո	շուրջ 22,560,000.0 ՀՀ դրամ
«Վերաինտեգրման քաղաքականություն վերադարձող միգրանտների համար» ծրագիր (OFII)	շուրջ 46,840,000.0 ՀՀ դրամ	շուրջ 46,840,000.0 ՀՀ դրամ
«Ձեռնարկության ստեղծման միջոցով վերահաստատմնանն աջակցող» ծրագիր	շուրջ 43,900,000.0 ՀՀ դրամ	շուրջ 43,900,000.0 ՀՀ դրամ

2. Պահանջվող փաստաթղթեր

Աուդիտի իրականացման ժամանակահատվածի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ պետք է աուդիտորին տրամադրի, վերջինիս կողմից պահանջվող, իր գործունեության հետ կապված բոլոր գրանցամատյանները և փաստաթղթերը: Աուդիտորի կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ծրագրերի՝ այդ թվում դրամաշնորհային, ֆինանսական քաղվածքները,
- Պայմանագրեր, համաձայնագրեր՝ այդ թվում դրամաշնորհային և ենթադրամաշնորհային,

		• Եկամուտների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական միջոցների հետ կապված հիմնական ֆինանսական փաստաթղթերը, • Ծրագրերի՝ այդ թվում դրամաշնորհային ծրագրերիի գործունեության հետ կապված ամսական կամ եռամսյակային հաշվետվությունները (ծրագրային և ֆինանսական), • Շրջանառու մնացորդային հաշվեկշիռը, դրամարկղային գիրքը, այլ կարևոր մատյաններ և փաստաթղթեր, որոնք հիմնված են Հայկական Ծրագրեր և այլ հաշվապահական համակարգերի վրա, • Բոլոր ծախսերի հետ կապված փաստաթղթերի բնօրինակները (հաշիվ-ապրանքագրերը, ապրանքների ձեռքբերում կամ մրցույթների անցկացում պահանջող այլ գնումների հիմքերը, աշխատավարձերը, վաուչերները և այլն), • Բանկային քաղվածքները, • Հայաստանի ՓՄՁ ԶԱԿի և համագործակցող կազմակերպության դրամաշնորհի իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ կարևոր նամակագրությունը, • Ցանկացած այլ հաշվետվություններ, որոնք արտացոլում են դրամաշնորհային ծրագրի ծախսերը, դրամաշնորհների հետ կապված կառավարչական և այլ հարցեր: **3. Աուդիտի նպատակը** 3.1. Աուդիտի նպատակն է ստանալ աուդիտորի մասնագիտական եզրակացությունը Հիմնադրամի ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ստացված միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ ՝ պատշաճ ուշադրություն դարձնելով միջոցների օգտագործման արդյունավետությանը: 4. **Աուդիտի գործունեության շրջանակները** 4.1. Աուդիտն իրականացվելու է Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան (ISA) և ներառելու է այն թեստերը և վերահսկման մեթոդները, որոնք անհրաժեշտ կհամարվեն աուդիտորի կողմից՝ ելնելով իրավիճակից: 4.2. **Խախտումներ և կոռուպցիա**. Ըստ ISA 240, ISSAI (Աուդիտորի պատասխանատվությունը կապված ֆինանսական փաստաթղթերի աուդիտի խախտումների հետ) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների՝ աուդիտորը պետք է ներկայացնի և գնահատի խախտումների հետ կապված բոլոր ռիսկերը, ստանա կամ ներկայացնի այդ ռիսկերի վերլուծության պատշաճ ապացույցներ և պատշաճ կերպով գնահատի սահմանված կամ կասկածվող ռիսկերը: 4.1 **Ռիսկեր.** Նպատակ հետապնդելով նվազեցնել աուդիտի ռիսկերը մինչ ընդունելի մակարդակները՝ աուդիտորը պետք է կիրառի աուդիտի ընթացակարգեր և հասցեագրի բոլոր շեղումները/ռիսկերը, որոնք հայտնաբերվում են գնահատման ընթացքում՝ ISA 330, ISSAI 1330 (Աուդիտորի արձագանքը գնահատված ռիսկերին) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն: 4.2 **Փորձագետների ներգրավում.** Որոշ գործողությունների բարդությունից ելնելով Աուդիտորը կարող է տեխնիկական փորձագետներ ներգրավել իր թիմի կազմում: Նման դեպքերում Աուդիտորը պետք է հետևի ISA 620**:** (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործում), INTOSAI's ISSAI 1620 (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործման վերաբերյալ) պահանջներին կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին: 4.3 Աուդիտն իրականացնելիս անհրաժեշտ է <u>հատուկ ուշադրություն</u> դարձնել հետևյալ կետերին.					

		ա. **Համապատասխանությունը կիրառելի օրենսդրությանը** – Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը լիովին համապատասխանում են կիրառելի օրենսդրության պահանջներին: բ. **Ծախսեր** – Հիմնադրամի միջոցները ծախսվել են հաստատված բյուջեին և աշխատանքային ծրագրին համաձայն, որոնք գործում էին ծախսն իրականացնելու պահին: գ. **Ներքին վերահսկման համակարգ** – Հաշվապահական հաշվառման և ընդհանուր ներքին վերահսկման համակարգի արդյունավետության բազմակողմանի գնահատում: դ. **Նախորդ աուդիտների հաշվետվությունների դիտարկումների հասցեագրում** – Աուդիտորը պետք է հասցեագրի նախորդ աուդիտների դիտարկումները զ. **Ապրանքներ և ծառայություններ** – Գնումներն իրականացվել են թափանցիկ, մրցակցային կարգով համապատասխան կիրառելի գնումների ընթացակարգերով: **5. Աուդիտորի կարծիք** 5.1. Աուդիտի հաշվետվությունը նախապատրաստելիս ընտրված աուդիտորական կազմակերպությունը պետք է ներկայացնի աուդիտորի կարծիքը՝ ISA 700-ի և ISSAI1700-ի (Կարծիքի ձևավորում և ֆինանսական փաստաթղթերի վերաբերյալ հաշվետվության ներկայացում) համաձայն: 5.2. Աուդիտորի կարծիքի ակնկալվող բովանդակությունը պետք է ներառի առնվազն հետևյալ կետերը. ա. Կարծիք աուդիտի ենթակա ժամանակահատվածի ավարտին Հիմնադրամի ֆինանսական դրության վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և դրանց օգտագործման արդյունավետությանը: բ. Ժամանակահատվածը, որի համար ներկայացված է կարծիքը: գ. Հաշվապահական հաշվառման ստանդարտների և կիրառվող սկզբունքների համապատասխանության հաստատում կամ այդ ստանդարտներից և սկզբունքներից ունեցած շեղումների ազդեցությունների ներկայացում: դ. Իրականացված աուդիտի ISA, ISSAI կամ համապատասխան ազգային աուդիտորական ստանդարտների պահանջներին համապատասխանության հաստատում: **6. Նամակ ղեկավարությանը** Աուդիտի հաշվետվությունից բացի աուդիտորները պետք է ներկայացնեն նամակ ղեկավարությանը, որը ներառում է. ա. Մեկնաբանություններ և դիտարկումներ հաշվապահական փաստաթղթերի, ընթացակարգերի, համակարգերի և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում: բ. Ներդրված համակարգերի և վերահսկողության թերությունների և թույլ կողմերի բացահայտում և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ: գ. Նախորդ աուդիտի հաշվետվությունների մեջ ներառված առաջարկությունների իրականացման կարգավիճակը: է. Այն խնդիրները, որոնք ուշադրության են արժանացել աուդիտի իրականացման ընթացքում: ը. Աուդիտորի կողմից կարևոր համարվող ցանկացած այլ հարցին: թ. Հիմնադրամի կողմից տրված պատասխանները աուդիտի առաջարկություններին՝ համաձայնեցված առաջարկությունների իրականացման ժամկետների հետ համատեղ: Այն դեպքերում, երբ Հիմնադրամի համար ընդունելի չեն աուդիտի դիտարկումները, ղեկավարության հաշվետվության մեջ արտացոլված կլինի նշված անհամաձայնությունը: Բոլոր դիտարկումները և առաջարկությունները պետք է քննարկվեն Հիմնադրամի ղեկավարության հետ՝ նախքան նամակի վերջնականացումը:					

7. Ընդհանուր տեղեկատվություն

7.1 Աուդիտի վերջնական հաշվետվությունը և դրան ուղեկցող ղեկավարության նամակը, ներառյալ Հիմնադրամի պատասխանները պետք է մշակվեն աուդիտն սկսելուց հետո առավելագույնը 35 օրացուցային օրերի ընթացքում:

7.2 Ընտրված աուդիտորական կազմակերպությունը ժամանակավորապես կունենա ֆինանսական կառավարման համակարգի, հաշվապահական փաստաթղթերի, գույքի, սեփականության և անձնակազմի հետ կապված բոլոր փաստաթղթերն ստանալու ամբողջական և չսահմանափակված իրավունք, որը կարող է օգտակար լինել աուդիտի հետ կապված ցանկացած հարցերի պարզաբանման համար:

8.Աուդիտորի որակավորումները

Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա միջազգային ճանաչում (լինի հաշվապահական ընկերությունների աշխարհի տասը խոշորագույն միջազգային ցանցերից մեկի անկախ անդամ), լինի լիովին անկախ՝ աուդիտի ենթարկվող կազմակերպության, նրա հետ ուղղակիորեն կապված հաստատությունների կառավարման և ֆինանսական շահերի առումներով: Աուդիտի ենթարկվող ժամանակահատվածում և աուդիտի իրականացման ընթացքում աուդիտորը չպետք է հանդիսանա աշխատող, հանդես գա որպես տնօրեն, կամ ունենա ցանկացած ֆինանսական կամ մտերիմ աշխատանքային հարաբերություններ հաստատության ղեկավարության ցանկացած բարձրաստիճան ներկայացուցչի հետ: Աուդիտորը պետք է հայտնի իր անկախությունը սահմանափակող ցանկացած հարաբերության մասին: Աուդիտորը պետք է ունենա ընկերության հիմնական աշխատակիցներից տվյալ ծրագրում ներգրավված միջազգային որակավորում (ACCA, CPA և այլն) ունեցող առնվազն հինգ աուդիտորներ:

9.Աուդիտի ժամանակացույցը և վերջնաժամկետները

Գործողություն	Ամսաթիվ
Նախնական հանդիպումներ	Պայմանագրի կնքման պահից 5 **օրացուցային օրվա** ընթացքում
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աուդիտի իրականացում	Պայմանագրի կնքման պահից 20 **օրացուցային օրվա** ընթացքում
Աուդիտի հաշվետվության և ղեկավարության նամակի նախագծերի ներկայացում	Պայմանագրի կնքման պահից 25 **օրացուցային օրվա** ընթացքում
Վերջնական հաշվետվություններկայացում	Պայմանագրի կնքման պահից 30 **օրացուցային օրվա** ընթացքում
Ղեկավարության նամակի ներկայացում	Պայմանագրի կնքման պահից 35 **օրացուցային օրվա** ընթացքում

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
<<Բի-Դի-Օ Արմենիա>>ՓԲԸ
Ք.Երևան, Վ.Սարգսյան 10, տարածք 114
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792
Տնօրեն՝ Վ.Մահակյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված N 2
« 12 » մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/3-42/18 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211160	Աուդիտի իրականացման ծառայություններ	-	-	900000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	**3000000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան
---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
<<Բի-Դի-Օ Արմենիա>>ՓԲԸ
Ք.Երևան, Վ.Սարգսյան 10, տարածք 114
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792
Տնօրեն՝ Վ.Մահակյան
---------- Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված 3
«12» մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
<<Բի-Դի-Օ Արմենիա>>ՓԲԸ	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Վ.Սարգսյան 10, տարածք 114	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Ամերիաբանկ ՓԲԸ	Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1570013745270100	Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 01569792	ՀՎՀՀ 02562459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2018 թ.

Պայմանագրի համարը՝ *ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/3*

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գլխավոր հաշվապահ Պ.Գասպարյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«12» մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ՀԱԿ-ԳՀԾՁԲ-2018/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018թ. _____ -ին կնքված N _ _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն